ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«27» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-18/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 10.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 10.02.2017թ. ներկայացված բողոքով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-

ի կարիքների համար ֆինանսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.01.2017թ. հայտարարվել է պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հայտարարության տեքստը հաստատվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 30.01.2017թ. թիվ 1 որոշմամբ և հրապարակվել է 2017թ. հունվարի 30-ին www.gnumner.am կայքում: Հայտարարությունում նշված է, որ մասնակիցների ներկայացրած հայտերի բացումը տեղի է ունենալու 2017թ. փետրվարի 13-ին ժամը 15:00-ին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ հասցեում:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի բովանդակության ՄԱՍ 1. «Գնման առարկայի բնութագիրը» բաժնում նշված է՝ գնման առարկա է հանդիսանում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերումը:

Աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 6 հավելվածում:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց հավելվածում ներառված են մասնակցին (աուդիտորին) ներիկայացվող հատուկ պահանջներ, այն է՝

- Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) «Ընկերությունների Ֆորումի» լիարժեք անդամ:
- Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:
- Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկամուտով գնահատվող 30 լավագույն վարկանիշ ունեցող միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է, որ նման սահմանափակում սահմանված չէ «Լիցենզավորման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ այլ օրենքներում և դրանցից բխող այլ իրավական ակտերում: Ուստի ըստ Ընկերության մասնակցի մասնակցության իրավունքների այդ կերպ (նման) սահմանափակումը չի բխում ՀՀ

օրեսնդրության պահանջներից, դեռ ավելին՝ այն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին, այն է՝

«Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»,

Օրենքի 6-րդ հոդվածի՝

 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է նույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ Ընթացակարգի մասնակիցների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ որևէ սահմանափակում չի նախատեսվել:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն, որպես այլ հանգամանքներ և նկատառումներ նշել է հետևյալը.

 Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը լիցեն-զավորված է, լիցենզիան տրվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անժամկետ,

բարդ ընթացակարգով՝ աուդիտորական ընկերության աուդիտի որակավորում ունեցող աշխատակիցների աուդիտորական վկայականների հիման վրա,

 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված աուդիտորները իրենց որակավորման ուժով և շնորհիվ տիրապետում են միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների (ՄՖՀՍ) ստանդարտներին,

 ՀՀ օրենսդրությամբ աուդիտորական ընկերությունները մրցակցային դաշտում իրավահավասար են,

 ՀՀ կառավարության 2010թ. Մարտի 11-ի 235-Ն որոշմամբ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները ամբողջությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ օրեսնդրությամբ սահմանված կարգով խոշոր ընկերությունը (խնդրո առարկա դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն») պարտավոր է իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել վերոհիշյալ ստանդարտներին համապատասխան,

 «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ 2015թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակվող ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին համապատասխան,

 «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը և Ընկերությունը աուդիտորական ծառայությունների ձեռքբերումը պետք է իրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն, որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին , որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 23-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար.

բ. մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ, շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման,

փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության...:

Այսպիսով, ըստ Ընկերության «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը կարող է սահմանվել միայն շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ:

Բողոքաբերը վկայակոչել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը, անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին: Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ու 2-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ

ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Այսպիսով, Ընկերությունը կարծում է, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգով մրցույթային հրավերում ներառված հատուկ պահանջները հակասում են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված սկզբունքներին, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 23-րդ կետի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն խնդրել է.

1. Կասեցնել «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» պարզեցված ընթացակարգը,
2. Դադարեցնել «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» պարզեցված ընթացակարգը:

2. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.02.2017թ. 39/02-07-47 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված չէ «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, այլ նախատեսված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների առկայության մասին և այդ պարագայում մասնակցի որակավորումը այդ չափանիշների գծով գնահատվում է բավարար:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի հրավերով նախատեսված հատուկ պահանջներին, ապա այս մասով Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ պահանջը բխում է 2012թ. օգոստոսի 3-ին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի համաձայնագրի Հոդված 3-ի 3.01 բաժնի «բ» կետի 1-ին մասի դրույթներով սահմանված պահանջներից, որի համաձայն՝ ծրագրի սուբյեկտը պետք է ենթարկի գրանցումները, հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ իր հաշվապահական

հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և ֆինանսական դիրքի փոփոխությունների վերաբերյալ հաշվետվությունը և դրանց ծանոթագրությունները) և իր դուստր ձեռնարկությունների գրանցումները, հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները ամեն ֆինանսական տարվա համար աուդիտի՝ Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ ըստ աուդիտի միջազգայնորեն ընդունված սկզբունքների և չափորոշիչների: Նույն ծրագրի շրջանակներում Բանկի կողմից ընկերությանն է ներկայացվել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի վերահաստատման և աուդիտորական ծառայությունների առաջադրանք», որիր 3-րդ մասի դրույթներով սահմանված է հետևյալ հատուկ պահանջները՝

- Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) «Ընկերությունների Ֆորումի» լիարժեք անդամ:
- Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:
- Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկամուտով գնահատվող 30 լավագույն վարկանիշ ունեցող միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) միջև 2012 թ. օգոստոսի 3-ին կնքված վարկային համաձայնագրի բնօրինակը և պաշտոնական թարգմանությունը գտնվում են ՀՀ ֆինանսների նախարարության տիրապետության տակ:

Պատվիրատուն՝ ի լրումն 15.02.2017թ. թիվ 39/02-07-47 գրության, 27.02.2017թ. թիվ 39/02-15-67 գրությամբ հայտնել է, որ ***«ԵՄ-ՊԸԾՁԲ-17/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգի ֆինանսավորումն իրականացվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից: «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, հանդիսանալով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման ծրագրի համաձայնագրի «Ծրագրի Սուբյեկտ», սպանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց չկատարման դեպքում ՎԶԵԲ-ի կողմից չի տրամադրվի Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրով նախատեսված վարկը:***

Մասնավորապես՝ Ծրագրի համաձայնագրի նախաբանով սահմանված է, որ Բանկը համաձայնվում է տրամադրել վարկ բացառապես այն պայմանով, որ Ծրագրի Սուբյեկտը կստանձնի համաձայնագրով սահմանված պարտավորությունները: Նույն համաձայնագրով սահմանվել է նաև «Գնումների ծրագիր», որը համաձայնագրով սահմանված մեկնաբանության համաձայն նշանակում է ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ցանկ, որոնք պետք է ժամանակ առ ժամանակ գնվեն Ծրագրի նպատակների իրականացման համար:

Ծրագրի համաձայնագրի Հոդված III-ի 3.01 բաժնի «բ» կետի 1-ին մասի դրույթներով սահմանված պահանջների պահպանմամբ, որն արդեն իսկ ներկայցվել է 15.02.2017թ. 39/02-07-47 գրությամբ, ***<u>Ծրագրի Սուբյեկտը պետք է ձեռք բերեր ոչ թե ընթացիկ տարեկան աուդիտի իրականացման ծառայություններ, այլ Բանկի կողմից Համաձայնագրով սահմանված հատուկ պահանջներով ֆինանսական աուդիտի իրականացման ծառայություններ, որը ֆինանսավորվում է Բանկի կողմից:</u>***

Հետևաբար՝ ***«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով հատուկ պահանջներ նախատեսելը պայմանավորված է Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրի իրականացման նպատակով կնքված Համաձայնագրով սպանձնած պարտավորությունների կատարմամբ:***

Ամփոփելով գրությունը՝ Պատվիրատուն հայտնել է, որ «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի պաանջներով չի խախտվել և/կամ սահմանափակվել որևէ մասնակցի մասնակցության իրավունքը, ինչպես նաև չի սահմանվել խտրական պահանջներ, ուստի Պատվիրատուն գտնում է, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

<u>3. ԳԲԽ-18/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-18/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու

նպատակով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ, «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա», «Ասատրյանս» ՍՊԸ և «Էն Աուդիտ» ՍՊԸ:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի «Գնման առարկայի բնութագիրը» բաժնի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերումը 1 չափաբաժնով՝ աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 6 հավելվածում:

3. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց հավելվածում ներառված են մասնակցին (աուդիտորին) ներիկայացվող պահանջներ, այն է՝

- Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) «Ընկերությունների Ֆորումի» լիարժեք անդամ:
- Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:
- Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկամուտով գնահատվող 30 լավագույն վարկանիշ ունեցող միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը:

4. Պատվիրատուն 27.02.2017թ. թիվ 39/02-15-67 գրությամբ հայտնել է, որ ***«ԵՄ-ՊԸԾՁԲ-17/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգի ֆինանսավորումն իրականացվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից:*** «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, հանդիսանալով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման ծրագրի համաձայնագրի «Ծրագրի Սուբյեկտ», ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց չկատարման դեպքում ՎԶԵԲ-ի կողմից չի տրամադրվի Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրով նախատեսված վարկը:

Հետևաբար՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով հատուկ պահանջներ նախատեսելը պայմանավորված է Երևանի մերտրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրի իրականացման նպատակով կնքված Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմամբ:

4. ԳԲԽ 18/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 10.02.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 15.02.2017թ. թիվ 39/02-07-47 և 27.02.2017թ. թիվ 39/02-15-67 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի*** և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը*** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով սահմանված կարգով ***Հայաստանի Հանրապետության*** և միջազգային իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմակերպության կամ միավորման միջև ստորագրված և նույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է, որը տվյալ միջազգային պայմանագրով որոշված կարգավորման առարկայի առնչությամբ պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ եւ պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված է նույն օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց հավելվածում ներառված են մասնակցին (աուդիտորին) ներկայացվող հատուկ պահանջներ, այն է՝

- Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) «Ընկերությունների Ֆորումի» լիարժեք անդամ:
- Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:
- Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկամուտով գնահատվող 30 լավագույն վարկանիշ ունեցող միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը:

Պատվիրատուն 27.02.2017թ. թիվ 39/02-15-67 գրությամբ հայտնել է, որ ***«ԵՄ-ՊԸԾՁԲ-17/18» ծածկագրով պարզեցված ընթացակարգի ֆինանսավորումն իրականացվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից:*** «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, հանդիսանալով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման ծրագրի համաձայնագրի «Ծրագրի Սուբյեկտ», ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց չկատարման դեպքում ՎԶԵԲ-ի կողմից չի տրամադրվի Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրով նախատեսված վարկը: Ծրագրի համաձայնագրի նախաբանով սահմանված է, որ Բանկը համաձայնվում է տրամադրել վարկ բացառապես այն պայմանով, որ Ծրագրի Սուբյեկտը կստանձնի համաձայնագրով սահմանված պարտավորությունները: Նույն համաձայնագրով սահմանվել է նաև «Գնումների ծրագիր», որը համաձայնագրով սահմանված մեկնաբանության համաձայն նշանակում է ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ցանկ, որոնք պետք է ժամանակ առ ժամանակ գնվեն Ծրագրի նպատակների իրականացման համար:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է նաև, որ ***Ծրագրի Սուբյեկտը պետք է ձեռք բերեր ոչ թե ընթացիկ տարեկան աուդիտի իրականացման ծառայություններ, այլ Բանկի կողմից Համաձայնագրով սահմանված հատուկ պահանջներով ֆինանսական աուդիտի իրականացման ծառայություններ, որը ֆինանսավորվում է Բանկի կողմից:***

Հետևաբար՝ ***«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից «ԵՄ-ՊԸԾՁԲ-17/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով հատուկ պահանջներ նախատեսելը պայմանավորված է Երևանի մերտրոպոլիտենի վերակառուցման և զարգացման Ծրագրի իրականացման նպատակով կնքված Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմամբ:***

Քանի որ Պատվիրատուի 15.02.2017թ. 39/02-07-47 և 27.02.2017թ. 39/02-15-67 գրությունների համաձայն՝ վերոգրյալը պայմանավորված է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև 2012թ. օգոստոսի 3-ին կնքված համաձայնագրով և Ծրագրի Սուբյեկտը պետք է ձեռք բերեր ոչ թե ընթացիկ տարեկան աուդիտի իրականացման ծառայություններ, այլ Բանկի կողմից Համաձայնագրով սահմանված հատուկ պահանջներով ֆինանսական աուդիտի իրականացման ծառայություններ, որը ֆինանսավորվում է Բանկի կողմից, և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը, ուստի Կենտրոնը առաջարկում է «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ 10.02.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ 18/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Տ. Գևորգյան